



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱՂԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 հունվարի 2019 թվականի թիվ 5-Ա  
ք. Երևան

#### ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱՂԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ, հոդվածի 26-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Կրճատել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության վերահսկողության բաժնի առաջատար մասնագետների 3 հաստիք և ավելացնել առաջատար մասնագետների 3 հաստիք Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժնում:

2. Կրճատել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի քարտուղարության առաջին կարգի մասնագետների 2 հաստիք և ավելացնել առաջատար մասնագետի 1 հաստիք Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավական ապահովման բաժնում և առաջատար մասնագետի 1 հաստիք՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնում:

3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի միջազգային կապերի, տեղեկատվության և զարգացման ծրագրերի բաժինն անվանափոխել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի միջազգային կապերի, հասարակայնության հետ կապերի և զարգացման ծրագրերի բաժին:

4. Կրճատել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի օգնականի 1 հաստիք և ավելացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գլխավոր քարտուղարի օգնականի 1 հաստիք:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱՂԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

22 հունվարի 2019թ.  
ք. Երևան